«Նյու Թեքնոլոջի Էդուքեյշն Ֆոնդ» բարեգործական հիմնադրամը մեկնարկում է **«ClimateLaunchpad Armenia 2018»** «կանաչ» բիզնես գաղափարների մրցույթի հայտադիմումների ընդունումը: **ClimateLaunchpad**-ը աշխարհում մաքուր և կանաչ տեխնոլոգիաների ոլորտի բիզնես գաղափարների ամենամեծ մրցույթն է:

Մրցույթին կարող են մասնակցել կլիմայի փոփոխություններին և մաքուր տեխնոլոգիաներին ուղղված նորարարական գաղափարներ ունեցող թիմերը՝ լրացնելով հետևյալ հայտադիմումը՝ http://climatelaunchpad.org/application-form/

Մինչ հայտադիմումը լրացնելը համոզվեք, որ՝
•Դեռ չեք սկսել Ձեր բիզնեսը կամ սկսել եք ոչ շուտ քան մեկ տարի առաջ,
•Չունեք հիմնական եկամուտի աղբյուր,
•Չեք ունեցել 200.000 եվրոյից ավել ֆինանսական ներդրում,
•Դեռ չեք իրականացրել Ձեր ապրանքի, արտադրական լուծումի կամ նախատիպի վաճառքը:

Հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը ՄԱՅԻՍԻ 3-Ն է:

Հայտադիմումների փուլը հաջողությամբ անցած մասնակիցները կմասնակցեն Եվրոպայից հրավիրված դասընթացավարի կողմից անցկացվող երկօրյա բիզնես ճամբարին, վեցշաբաթյա մենթորային (խորհրդատվական) դասընթացներին, ինչպես նաև սեպտեմբերին կայանալիք ազգային եզրափակչին: Ազգային եզրափակչի 3 հաղթողներն էլ կմեկնեն Շոտլանդիա՝ մասնակցելու համաշխարհային եզրափակչին:

Մրցույթն իրականացվում է **Climate-KIC** - ի հետ համատեղ՝ Եվրոպական միության նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի աջակցությամբ **(EIT - European Institute of Innovation and Technology)**: